«Ազատութիւնը, արդարութիւնը, խաղաղութիւնը նուիրական արժէքներ են քրեիստոնէական կեանքում»

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ «ԱՒՐՈՐԱ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(5 մայիսի, 2017 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում «Աւրորա» մրցանակաբաշխութեան կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին:

Ուրախ ենք, որ «Աւրորա» մարդասիրական մրցանակաբաշխութիւնը հաստատուն քայլերով շարունակում է իր առաքելութիւնը՝ Հայոց Ցեղասպանութիւնը վերապրողների անունից գնահատանքի արժանացնելով ու աջակցելով այն անձանց, ովքեր իրենց ապահովութիւնը վտանգելով՝ մեծ ու երախտարժան օգտակարութիւն են բերում դժուարութիւնների ու փորձութիւնների մէջ յայտնուած մարդկանց՝ նրանց հոգիներում յոյսի ու լաւատեսութեան շողեր ծագեցնելով ապագայի հանդէպ:

Ցաւօք, 21-րդ դարում նոյնպէս շարունակուում են ցեղասպանութիւնները, աշխարհը ցնցուում է պատերազմների ու ահաբեկչութիւնների արհաւիրքներից: Այսօր էլ տարբեր ազգութիւնների ու կրօնների պատկանող բազմաթիւ անմեղ մարդիկ՝ կանայք, տարեցներ ու երեխաներ մահաբեր զէնքերի, սովի ու տարատեսակ համաճարակների զոհ են դառնում կամ հալածուում հայրենի բնօրրանից՝ անասելի դժուարութիւններ յաղթահարելով ապրելու ու գոյատեւելու համար: Այսպիսի ճանապարհ մեր ժողովուրդը անցաւ շուրջ մէկ դար առաջ՝ Օսմանեան Թուրքիայում իրականացուած Հայոց Ցեղասպանութեան տարիներին, երբ միլիոնաւոր հայորդիներ կոտորուեցին իրենց հայրենիքում ու տարագրուեցին աշխարհով մէկ՝ զրկուելով իրենց ստեղծած նիւթական, հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնից:

«Աւրորա» մրցանակաբաշխութիւնը աւելի լաւ ու բարի աշխարհ կառուցելու իւրօրինակ կոչ ու հրաւէր է քաղաքակիրթ աշխարհին՝ հետեւողականօրէն պայքարելու ընդդէմ մարդկութեան դէմ իրագործուող հանցագործութիւնների, որոնք չունեն որեւէ արդարացում: Մարդասիրական արժէքների տարածումով է, որ պիտի արդիւնաւորուեն ջանքերը յանուն աշխարհի խաղաղութեան եւ ազգերի ու պետութիւնների միջեւ համե-

բաշխ գոյակցութեան՝ աստուածային լոյսն ու շնորհներն առատացնելով մարդկային կեանքում:

Վերստին Մեր գնահատանքն ենք բերում «Աւրորա» մրցանակաբաշխութեան կազմակերպիչներին ու աջակիցներին եւ մաղթում յաջողութիւններ իրենց մարդասիրական վեհ առաքելութեան մէջ:

Ի խորոց սրտի աղօթում ենք, որ Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ պահպանի աշխարհը համայն եւ խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի բոլոր ժողովուրդներին:

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստուծոյ որդիներ պիտի կոչուեն» (Մատթ. Ե. 9):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ